

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱԼԱԲԱՐ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒՆ

Սույն թվականի փետրվարի սկզբներին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքի հավանությամբ, Քոչին (Հընդկաստան) մեկնեց Երուսաղեմի հայոց պատրիարքության դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի տեսուչ տ. Շահե արքեպիսկոպոս Ահեմյանը՝ մասնակցելու մալաբար ուղղափառ եկեղեցու կաթողիկոս Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թումա Մատթեոս Ա-ի գահակալության հանդիսությանը:

Հանդիսությունը տեղի է ունեցել փետրվարի 15-ին Քոչին քաղաքի մարզադաշտում՝ բազմահազար հավատացյալների ներկայությամբ:

Հանդիսությանը մասնակցել են նաև քույր եկեղեցիներից պաշտոնական պատվիրակություններ, հնդիկ, իսլամ, բուդդայական կրոնների հոգևոր պետեր և պետական բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Քոչինում տեղի ունեցած հանդիսությունների ժամանակ արտասանված բոլոր ճառերում, այդ թվում՝ ամբողջ Հնդկաստանի իսլամների կրոնապետի, տեղի նահանգապետի և բարձրաստիճան պետական այլ ներկայացուցիչների, ինչպես նաև քույր եկեղեցիների պատվիրակությունների ղեկավարների ելույթներում շեշտվել է մալաբար ուղղափառ եկեղեցու ինքնուրույնության և անկախության գաղափարն ու անվերապահ համակրություն և ցանկություն է արտահայտվել մալաբար եկեղեցին տեսնելու իբրև ազգային ինքնագլուխ եկեղեցի՝ ազատագրված օտար եկեղեցական իշխանության լծից, ընթանալու համար իր ազգային ազատ ճանապարհով՝ որպես լիիրավ եկեղեցի քրիստոնեական եկեղեցիների մեծ ընտանիքում:

Այս ոգով հանդիսությունների ընթացքում ելույթ է ունեցել նաև Մայր Աթոռի ներկայացուցիչ տ. Շահե արքեպիսկոպոսը՝ հանուն Հայոց Հայրապետի համակրություն և սեր արտահայտելով մալաբար քույր եկեղեցու հանդեպ իր ինքնուրույնության և ազգային եկեղեցական դիմագծի պահպանման համար նրա մղած պայքարում:

Այս առթիվ տ. Շահե արքեպիսկոպոսը Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թումա Մատթեոս Ա կաթողիկոսին է հանձնել Հայոց Հայրապետի եղբայրական նվերը՝ մի մեծ գեղեցիկ խաչ, որ անձամբ ս. Էջմիածնից Քոչին է տարել տ. Վազգեն վարդապետ Թադոյանը:

Նույն ոգով համաժողովրդական նմանօրինակ բազմամարդ մի հանդիսություն է տեղի ունեցել Քերալա նահանգի մայրաքաղաք Թրիվանդրոմում:

Երեկոյան, ի պատիվ բոլոր հյուրերի, կազմակերպվել է պաշտոնական ընդունե-

լություն, որին ներկա են եղել նահանգի վարչապետը և պետական այլ հրավիրյալներ, որոնք իրենց ելույթներում դարձյալ իրենց համակրությունն են հայտնել Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թումա Մատթեոս Ա. կաթողիկոսին՝ որպես մալաբար եկեղեցու օրինավոր հոգևոր պետի:

Ընդունելության ժամանակ դարձյալ խոսք է առել տ. Շահե արքեպիսկոպոսը և կընդունել, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, հայ եկեղեցու համակրությունն ու սերը դեպի մալաբար քույր եկեղեցին:

Հրաժեշտ առնելուց առաջ տ. Շահե արքեպիսկոպոսը, Հայոց Հայրապետի անունից, Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թումա Մատթեոս Ա. կաթողիկոսին սրտագին հրավեր է ուղղել՝ հարմար մի առիթով այցելելու հայ եկեղեցու պատմական կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածին: Հրավերն ընդունվել է սիրով:

Սույն հանդիսությանն այս առթիվ տրվել էր բացառիկ նշանակություն այն պատճառով, որ Հնդկաստանի մալաբար ուղղափառ եկեղեցու և Դամասկոսի ասորի պատրիարքության միջև վերջերս ստեղծվել էր որոշ տարակարծություն: Դամասկոսի ասորի Իգնատիոս Պատրիարքը ոտնձգություններ էր կատարել մալաբար եկեղեցու իրավասության սահմաններից ներս: Ասորի Պատրիարքը Դամասկոս՝ իր մոտ կանչելով մալաբար եկեղեցու եպիսկոպոսներից մեկին, նրան կաթողիկոս է օծել մալաբար եկեղեցու վրա՝ պառակտելով այսպես սույն մեծ և հնագույն եկեղեցու ներքին միասնությունը՝ հակաթոռություն ստեղծելով վերոհիշյալ եկեղեցու ծոցում:

Պատմական փաստ է, որ մալաբար ուղղափառ եկեղեցին ազգային եկեղեցի է և ամեն կերպ ուզում է պահել իր ազգային դիմագիծը Դամասկոսի ասորի պատրիարքության հակականոնական ոտնձգությունների դեմ: